

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ 2019-2020

6-րդ դասարան,

Տևողությունը 150 րոպե

- Վարդանը գումարեց ամսվա բոլոր հինգշաբթի օրերի ամսաթվերը և ստացավ 85: Ի՞նչ թիվ կստանար Վարդանը, եթե գումարեր ամսվա բոլոր ուրբաթ օրերի ամսաթվերը:
1) 58 2) 66 3) 89 4) 90
- Արմենը հաշվեց 10-ից մեծ և 20-ից փոքր բոլոր պարզ թվերի արտադրյալը: Քանի՞ բաժանարար ունի Արմենի ստացած թիվը:
1) 8 2) 12 3) 16 4) այլ պատասխան
- Քանի՞ եղանակով է հնարավոր 432104321043210 տասնհինգանանիշ թվից ջնջել երկու թվանշան այնպես, որ ստացված տասներեքանիշ թիվը բաժանվի 45-ի:
1) 12 2) 15 3) 18 4) այլ պատասխան
- 8x8 շախմատային դաշտի բոլոր սպիտակ վանդակների պարագծերի գումարը 640 սմ է: Ինչքա՞ն է շախմատային դաշտի մակերեսը:
1) 1600 սմ² 2) 2400 սմ² 3) 3200 սմ² 4) այլ պատասխան
- Հաշվել գումարը. $2+6+10+14+\dots+194+198+202$
1) 5100 2) 5202 3) 5304 4) այլ պատասխան
- Տակառի որոշ մասը լցված է գինով: Եթե նրա մեջ լցնեն 30լ գինի, ապա այն լցված կլինի կիսով չափ, իսկ եթե նրանից դատարկեն 70լ, ապա լցված կլինի տակառի $\frac{1}{6}$ մասը: Սկզբում տակառի n ը մասն է լցված:
1) $\frac{2}{5}$ 2) $\frac{5}{12}$ 3) $\frac{3}{10}$ 4) $\frac{1}{3}$
- $a + \frac{1}{b+\frac{1}{c}} = 2\frac{7}{15}$ արտահայտության մեջ տառերը փոխարինել են բնական թվերով այնպես, որ ստացվել է ճիշտ հավասարություն: Գտնել a, b, c թվերի գումարը:
1) 9 2) 10 3) 11 4) 12
- Երկու թվերի գումարը 140 է, իսկ այդ թվերից մեկի կրկնապատիկը մյուսին բաժանելիս քանորդում ստացվում է 5, մնացորդում՝ 14: Գտնել այդ թվերի տարբերությունը:
1) 34 2) 42 3) 52 4) այլ պատասխան
- 300-ից մեծ և 800-ից փոքր քանի՞ բնական թիվ կա, որոնք առանց մնացորդի բաժանվում են 7 և 11 թվերից միայն մեկին:
1) 103 2) 110 3) 117 4) այլ պատասխան
- 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10 թվերը բաժանել են երկու քառյակների այնպես, որ մի խմբի թվերի արտադրյալը հավասար է մյուս խմբի թվերի արտադրյալին: Նշվածներից n թվերը չեն կարող գտնվել նույն խմբում:
1) 2 և 9 2) 4 և 5 3) 5 և 8 4) 4 և 10
- 255 մ երկարությամբ գնացքը թունելն անցավ 1 րոպեում, իսկ այդ գնացքի ուղևորը նկատեց, որ թունելն անցել է 45 վայրկյանում: Քանի՞ մետր է թունելի երկարությունը:
- 3 խնձորը և 4 սալորը միասին կշռում են այնքան, որքան 5 տանձր: 1 խնձորը 2 սալորից ծանր է 50 գ-ով: Քանի՞ գրամով է խնձորը ծանր տանձից:
- Գտնել $81 \cdot 82 \cdot 83 \cdot \dots \cdot 98 \cdot 99 - 254$ արտահայտության արժեքի վերջին երեք թվանշաններով առաջացած եռանիշ թիվը:
- Աշակերտը 3 օրում կարդաց գիրքը: Առաջին օրը նա կարդաց գրքի 20%-ից 16 էջ ավելի, երկրորդ օրը՝ մնացածի 30%-ից 20 էջ ավելի, իսկ երրորդ օրը՝ մնացածի 75%-ը և վերջին 30 էջը: Քանի՞ էջ ունի գիրքը:
- Ինչ-որ բնական թիվ 21-ի բաժանելիս քանորդում և մնացորդում ստացվում են հավասար թվեր: Այդ նույն թիվը 33-ի բաժանելիս քանորդում և մնացորդում նույնպես ստացվում են հավասար թվեր: Գտնել այդ թիվը: